ԳԼՈՒԽ Զ.

ԶԻՆԱԴԱԴԱՐ ԵՒ «ՄՈՒԹ ՁԵՌՔԻ» ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Ռուս բանակի քայքայումը և Թիկունքում կատարուող դէպքերը, բնականաբար, չէին կարող վրիպել Թիւրքերի ուշադրութիւնից: Թիւրք հրամանատարութիւնը բոլորովին այլ հեռանկարի առջև էր կանգնած. ռուս բանակը պատրաստւում էր, 1918 Թւի սկզբին, անցնելու ընդհանուր յարձակման՝ անգլիացիներին միանալու ծրագրով, և Թիւրքերը ոյժ չունէին դիմադրելու: 1917 Թւի տարեվերջին Թիւրքերի արեւելեան բանակը բոլորովին կազմալոյծ ու բարոյալքւած վիճակի մէջ էր՝ անընդունակ ռազմագիտական լուրջ խնդիրներ լուծելու: Եւ, յանկարծ, ոչ միայն յարձակումն է կանգնեցւում, այլ և ճակատը սկսում է արագօրէն մերկանալ: Թիւրք ղեկավարների առջև բացւում էին նոր, արբեցնող հորիզոններ:

Նոյեմբ. 17-ին կովկասեան ռուս բանակի հրամանատարը Թիւրքական 3րդ բանակի հրամանատար Ֆերիկ-Վեհիբ փաշայից նամակ ստացաւ զինադադար կնքելու առաջարկութեամբ: Նոյն օրերին, բոլշեւիկների նախաձեռնութեամբ, զինադադարի բանակցութիւններ էին սկսւած և ռուս-աւստրեւ գերման ռազմաճակատում: Անդրկ.Կոմիսարիատը, յեղափոխական կենտրոնի ու հրամանատարութեան համաձայնութեամբ, ընդունեց Թիւրքական առաջարկը և ռազմաճակատ ուղարկեց 5 հոգինոց մի յանձնախումբ — 2 ռուսներ հրամանատարութեան կողմից և Ա. Ջամալեան, վրացի Թևզայա և ռուս Սմիրնովը, որպէս Անդրկ. Կոմիսարիատի ներկայացուցիչներ: Հանդիպումը երկու պատւիրակութիւնների միջև տեղի ունեցաւ դեկտ.2-ին, Երզնկայում, իսկ դեկտ. 5-ին ստորագրւեց զինադադարի համաձայնութիւնը, ըստ որի զինւորական գործողութիւնները վերջ էին գտնում կովկասեան ամբողջ ռազմաճակատի վրա՝ Սև ծովից մինչև Վանի լճի հարաւային եզերքը, կողմերը պարտաւորւում էին զինւորական բնոյթ կրող որև է գործողութիւն չանել, զօրքերի տեղափոխութիւն կամ լրացում չկատարել և մնալ զինադադարի պայմաններով նախատեսնւած դիրքերում: Եթէ կողմերից մէկն ու մէկը, մինչև հաշտութեան կնքումը, վճռէր զինադադարը խախտել, պարտաւորւում էր միւս կողմին իմաց տալ 14 օր առաջ: Իսկ եթէ զինադադար կնքւէր նաև կենտրոնական պետութիւնների և Ռուսաստանի միջև, նրա բոլոր պայմանները պէտք է լինէին պարտադիր կովկասեան ճակատի համար ևս: Եւ որովհետեւ. դեկտ. 5-ին լուր էր ստացւել, որ